

Վարդան Սախկայան

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Հոդվածում հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկել իրավունքի՝ որպես սոցիալական նորմատիվ կարգավորիչի հիմնատարրի էական բնութագրիչները, բացահայտել է դրանց բովանդակային առանձնահատկությունները:

Հիմնաբառեր- իրավունք, իրավունքի էություն, իրավունքի հատկանիշ, նորմատիվություն, որոշակիություն, իշխանական բնույթ, համապարտադրականություն:

Իրավունքի սոցիալական նշանակության հասկացության և էության բացահայտումը անհնար է, քանի դեռ չի բացահայտվել նրա էական, հիմնային և ելակետային հատկանիշները, որոնց շնորհիվ այն տարբերվում է մյուս նորմատիվ կարգավորիչներից:

Իրավունքի նման առավել էական հատկանիշներին դասվում են 1) պետական-կամային բնույթը, 2) նորմատիվությունը, 3) իշխանական բնույթը, 4) ձևական որոշակիությունը: Իր հերթին իրավունքի հասկացության գլխավոր բաղադրիչներ ներկայացնող այդ հատկանիշներից յուրաքանչյուրի բովանդակությունը տարբերակվում է համալիր, բազմամակարդակ բնույթով, բարդ կառուցվածքով, ինչը ձևավորվում է իրավունքի տվյալ հիմնական հատկանիշը բացահայտող և կոնկրետացնող մի շարք առանձնահատուկ գծերից և հատկություններից:

Իրավունքի պետական-կամային բնույթը կայանում է նրանում, որ իրավունքը արտահայտում է հասարակության պետական կամքը, որը պայմանավորված է վերջինիս տնտեսական, մշակութային, ազգային, կրոնական, ժողովրդագրական և այլ պայմաններով:

Իրավունքը անիմաստ է մարդկանց գիտակցված, կամային գործունեությունից դուրս: Իրավունքը միշտ հանդիսանում է կամք, սակայն ցանկացած կամք իրավունք չէ: Այսպես իրավունք չի հանդիսանում առանձին անհատի, այս կամ այն սոցիալական խմբերի, շերտերի, դասերի կամքը: Ինքնին իրավունք չի դառնում նաև քաղաքական կուսակցությունների և հասարակական միավորումների փաստաթղթերում արտահայտված կամքը:

Իրավունքի գիտակցական-կամային բնույթն արտահայտվում է նրանում, որ այն մարդկային գիտակցության միջոցով արտացոլում է այդ պահանջումները և շահերը, հասարակական օրինաչափությունները: Այդպիսով, իրավունքը գիտակցված նորմերի ամբողջություն է: Իրավունքը նաև մարդկանց կամքի դրսևորումն է, քանի որ դրանում

սահմանվում է նրանց ապագա վարքագիծը, իրավունքի միջոցով կենսագործվում են սուբ-յեկտիվ շահերը, պահանջումները, նպատակները:

Իրավունքը հասարակության պետական կամքն է¹. ոչ թե կառավարող դասի, այլ հատկապես՝ հասարակության: Պետական կամքի նորմատիվային հասկացության նման մեկնաբանությունում նորը բխում է համամարդկային տեսանկյունից և իրավունքի իմացության անհրաժեշտության ընդունումից, դրա հասկացության բացահայտումից, վերջինի միաժամանակ և՛ ընդհանուր սոցիալական, և՛ դասային հիմքերի համակցման հաշվառմամբ:

Իրականում, պետությունով «անցնում», կամ որ նույն բանն է, «օրենքի կարգավիճակ է ստանում», պետական, բոլոր մարդկանց համար պարտադիր է դառնում ոչ միայն իշխանական դասի, այլ նաև տվյալ հասարակության դասերի, շերտերի և այլ սոցիալական ձևավորումների շահերը և հավակնությունները արտահայտող կամքը: Ձգտելով առկա հակասությունների նվազեցման և հաղթահարմանը, տարբեր սոցիալական շերտերի միջև փոխգիջմանը, պետությունը հաշվի է առնում, շտկում և ընդհանրացնում հասարակության բարդ և հակասական կամքը՝ տալով դրան նոր հատկություններ և համընդհանուր արտահայտում պետական կամային արտահայտման ձևով: Կամքի այլ տարատեսակներից պետական կամքը տարբերվում է. նրանով, որ. առաջին՝ դրանում կենտրոնացվում են բնակչության տարբեր դասերի և խմբերի տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ հետաքրքրությունները և հավակնությունները, երկրորդ՝ այն, լինելով անկախ առանձին անձանց և միավորումների կամքից պարտադիր է ամբողջ հասարակության համար, երրորդ՝ այն օբյեկտացվում է պետությունից բխող և դրա կողմից պահպանվող ընդհանուր պարտադիր դրույթներում, վարքագծի կանոններում, որոնք անվանվում են իրավական կամ իրավաբանական նորմեր, հանդիսանում են մարդկանց միջև հարաբերությունների տարատե-

www.journal.lawinstitute.am

սակ իշխանական-պաշտոնական կարգավորիչներ:

Հատկապես հասարակության նման պետական կամքը, որը մարմնավորված է իրավական նորմերում, հանդիսանում է հենց իրավունքը:

Իրավունքի էությունը և բովանդակությունը սահմանվում է ոչ միայն տվյալ հասարակության տնտեսական կառուցվածքով, այլ նաև քաղաքականությամբ, բարոյականությամբ, իրավագիտակցությամբ, գիտությամբ, մշակույթով, կրոնով և սոցիալական կյանքի բոլոր այլ իրականություններով, որոնք ձեռք են բերվել քաղաքակրթության մակարդակով:

Հատուկ ուշադրության է արժանի այնպիսի համամարդկային գործոնը, որը արդեն մի քանի հարյուրամյակ ունի հզոր ազդեցություն իրավունքի ձևավորման և զարգացման վրա, ինչպես մարդու բնական, ի ծնե անօտարելի իրավունքի վերաբերյալ ուսմունքն է, որը պետք է ընկած լինի տվյալ պետությունում գործող պոզիտիվ, պաշտոնական իրավունքի հիմքում: Միայն այս դեպքում, համաձայն բնական-իրավական ուսմունքի (Հ. Գրոցիոս, Բ. Սպինոզա, Թ. Հոբբս, Ջ. Լոկ, Ս. Պուֆենդորֆ, Ֆ. Վոլտեր, Շ. Մոնտեսքյո, Ժ-Ժ. Ռուսո, Ա.Ն. Ռադիշև և ուրիշներ), վերջինս ընդունվում է մարդկային գիտակցությանը, բնույթին համապատասխանող և այդ իսկ պատճառով՝ մարդասիրական և արդարացի:

Նրանից հետո, երբ բնական-իրավական տեսության կողմից հռչակված օրենքները, որոնք սինթեզում են իրավագիտակցության և բարոյականության սկզբունքների և գաղափարների վերաբերյալ համամարդկային պատկերացումները, առաջին անգամ ստացան պետական կամքի որակով արտահայտում ֆրանսիական հեղափոխության հիասպանչ փաստաթղթերից մեկում՝ Մարդու և քաղաքացու ազատությունների հռչակագրում (1789թ.), դրանք անցան բարդ և երկար ճանապարհ, որը նշանավորվեց ՄԱԿ-ում Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948թ.) միջազգային-իրավական ընդունմամբ և անձի իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային և ներպետական փաստաթղթերում դրանց հետագա զարգացմամբ³: Հարցը՝ համապատասխանում կամ չի համապատասխանում այս կամ այն պետության իրավունքը մարդու և քաղաքացու բնածին, հիմնարարական իրավունքների և ազատությունների ընդունման և պաշտպանության գաղափարներին, դարձավ տվյալ պետության և իրավունքի դեմոկրատական կամ անբողջատիրական բնույթի սահմանման միջազգային ընդունված չափորոշիչ:

Խորհրդային անցյալում երկարատև տասնամյակների ընթացքում բնական-իրավական տեսությունը մյուսներին՝ այսպես կոչված «գաղափարական, բուրժուական» ուսմունքներին, զուգահեռ դրգմատիկ դիտարկվում էր որպես պաշտոնական գաղափարախոսության հետ անհամատեղելի. իրավագիտությունում գերակայում էր բնական և պոզիտիվ իրավունքների անհիմն հակադրումը:

Բնական-իրավական տեսության գաղափարների ազդեցությունը ժամանակակից ազգային իրավունքի զարգացման վրա ստացավ պաշտոնական ընդունում և արտահայտում ՀՀ Սահմանադրությունում:

Դրա հետ անմիջականորեն կապված է ազգային իրավունքի բարոյական հիմքերի խորացման, ժողովրդավարական հասարակության իրավունքի և բարոյականության մերձեցման, դրանց միջև ծագող հակասությունների հնարավոր հաղթահարման ներկայիս գործընթացը: Համապատասխանաբար նոր պահերից մեկը, որը բնութագրում է իրավունքին նորմատիվային մոտեցումը, կայանում է իրավունքի բնական դպրոցի գաղափարներից նախկինում գոյություն ունեցող հեռացման լիարժեք հաղթահարման ձգտման մեջ, վերջինս ապահովում է բնական և պոզիտիվ իրավունքի միասնությունը տեսությունում և գործնականում:

Այսպիսով, նրանում, որ իրավունքը հասարակության պետական կամքն է իր զարգացման տվյալ փուլում, որը պայմանավորված է իր գոյության տնտեսական, քաղաքական, հոգևոր և այլ պայմաններով, կայանում է իրավունքի համամարդկային և դասակարգային էությունը: Դրա անմիջական արտահայտում հանդիսանում է իրավունքի պետական-կամային բնույթի արտահայտումը: Իրավունքի այդ հատկանիշի վերլուծությունը անքակտելի կապված է դրա կարևոր այլ հատկանիշի՝ նորմատիվության դիտարկման հետ:

Իրավունքի նորմատիվային բնույթը կայանում է նրանում, որ իրավունքը՝ որպես հասարակության պետական կամք, արտահայտվում է իրական կյանքում տվյալ պետությունում պաշտոնապես ընդունվող և գործող իրավաբանական նորմաների համակարգը իրենց նյութական հասկացությունում:

Իրավագիտությունում նորմերի այդ համակարգը ընդունված է անվանել իրավունք օբյեկտիվ իմաստով՝ նկատի ունենալով, որ այն, հանդիսանալով հասարակության պետական կամքը, կախված չէ առանձին անհատների կամքից և հարմարացված չէ որևէ կոնկրետ սուբյեկտի: Դրանով իսկ օբյեկտիվ իրավունքը (նորմերի համակարգը) տարբերվում է իրավունքից սուբյեկտիվային իմաստ

տով (սուբյեկտիվ իրավունք) որպես իրավահարաբերության այս կամ այն մասնակցի (սուբյեկտի) իրավունք (լիազորություններ):

Իրավունքի նորմատիվային հատկանիշը հնարավորություն է տալիս բացատրել իրավունքի էության, բովանդակության և ձևի հարաբերակցությունը:

Դա բարդ, տարբեր հեղինակների, այսինքն՝ իրավունքի նորմատիվային հասկացության համախոհների կողմից տարբեր կերպ մեկնաբանվող հարց է: Հեղինակներից ոմանք միահյուսում են իրավունքի բովանդակությունը դրա էության, մյուսները՝ դրա ձևի հետ⁴:

Այս հարցի ճիշտ լուծում կարելի է գտնել՝ դիտարկելով վերջինիս պետական-կամային և նորմատիվային հատկանիշների տեսանկյունից: Եթե իրավունքի էությունը, այսինքն՝ տվյալ երևույթում գլխավորը, կայունը, օրինաչափը կայանում է նրանում, որ այն հանդիսանում է ամբողջ իրական կյանքով պայմանավորված հասարակության պետական կամքը, ապա դրա բովանդակությունը կազմում է այդ կամքի նորմատիվային արտահայտումը՝ պետությունից բխող ընդհանուր պարտադիր դրույթների, վարքագծի կանոնների համակարգ, որոնք իրենցից ներկայացնում են սոցիալական նորմաների առանձնահատուկ տարբերակ: Այլ կերպ, քան իշխանության կողմից ընդհանուր պարտադիր նորմերի հրապարակման կամ սանկցիավորման ուղիով, անհնարին է թվում վերածել հասարակական կամքը օրենքի, արտահայտել այն որպես պետական: Դրանով իսկ իրավունքի բովանդակությունը հսկում է տվյալ հասարակության իրավունքի էությունը այն կազմող իրավական նորմների ամբողջ բազմաձևությունում⁵:

Առանձին վերցված նորմը ելակետային կառուցվածքային տարր է, առաջնային բջջային իրավունք:

Իրավունքի նորմերը տարբերվում են այլ սոցիալական նորմերից (սովորույթներ, բարոյականության, հասարակական միավորումների նորմաներ և այլն) միայն իրենց բնորոշ առնձնահատկությունների, գծերի շարքով՝ պետության հետ կապ, պետական հարկադրությամբ խախտումներից պաշտպանություն, ընդհանուր պարտադիրություն, պաշտոնական որոշակիություն, ինստիտուցիոնալություն, հասարակական հարաբերությունների պաշտոնական կարգավորիչի որակ:

Պետության հետ իրավունքի նորմերի կապը կայանում է նրանում, որ դրանք, ի տարբերություն այլ սոցիալական նորմերի, հրատարակվում կամ սանկցիավորվում են պետության կողմից և պահ-

պանվում ոչ միայն դաստիարակությամբ և համոզմամբ, որը բնորոշ է նաև այլ սոցիալական նորմերին, այլ նաև, երբ դա անհրաժեշտ է, հարկադրական իրավական սանկցիայի կիրառությամբ:

Իրավագիտությունում, ինչպես հայտնի է, արդարացի քննադատության է արժանացել անցյալի սխալների որակով, Վիշինսկու անվան հետ կապված, ձևակերպումը, որը հանգեցնում է իրավունքը հարկադրության միջոցներին. դրա բոլոր կիրառությունները «ապահովվում են պետության հարկադրական ուժով»: Նման արտահայտությունները անհաջող, ոչ հստակ են, անընդունելի, քանի որ քաղաքացիների մեծամասնությունը, չնայած երկրում սոցիալ-տնտեսական դժվարություններին և բարդ քրեական իրավիճակին, ինքնակամ և գիտակցաբար համապատասխանեցնում է իր վարքագիծը իրավունքի նորմերին: Սակայն, ի տարբերություն բարոյականության, կորպորատիվ և այլ սոցիալական նորմերի, որոնց կատարման համար հարկադրության միջոցներ են հանդիսանում հասարակական ազդեցության տարբեր միջոցները, իրավունքի հետևում միշտ «կանգնած» է պետական ապարատը, որը իրավական նորմերի խախտման ժամանակ ունակ է հարկադրել դրանց պահպանությանը: Հետևաբար, «ոչ թե պետության հարկադրական ուժով իրավունքի ապահովման», այլ որպես իրավական նորմերի իրականացման, խախտումներից պաշտպանության երաշխիքի պետական հարկադրության հնարավորությունում է կայանում իրավունքի կարևորագույն առանձնահատկություններից մեկը:

Շարադրվածի հետ ուղղակի կապված է իրավունքի այլ կարևորագույն գիծը՝ պարտադիրությունը: Դա պետական ինքնիշխանության հետևանք և արտահայտում է: Իրավական նորմերի բոլոր այլ տարատեսակություններ (բարոյականություն, կորպորատիվություն, կրոնականություն և այլն) պարտադիր են բնակչության այս կամ այն հատվածի համար: Եվ միայն իրավունքը՝ նորմերի համակարգը, պարտադիր է բոլորի համար: Դրանով իսկ իրավունքին հատկացվում է հասարակության ամբողջ իրավական համակարգի օրինակականության և իրավակարգի նորմատիվային հիմքերի դերը:

Իրավունքի այլ անբաժանելի գիծը պաշտոնական սահմանվածությունն է, այսինքն նորմերի ճշտություն, հստակություն, ծավալունություն, կայունություն, որին մասնավորապես նպաստում են դրանց այնպիսի ներքին հատկություններ, ինչպես իրավական նորմերի առանձնահատուկ կառուցվածքը և դրանց արտաքին ձևավորման իրավաբա-

նական տեխնիկան:

Իրավունքի առանձնահատուկ կարևոր հատկություն, որը վերջինիս հաղորդում է պաշտոնական սահմանվածություն, հանդիսանում է վերջինիս ինստիտուցիոնալությունը. այն, ըստ իր նշանակության, կարող է դիտարկվել նաև որպես իրավունքի՝ իր նորմատիվային հատկանիշից բխող ինքնուրույն, տարբերակիչ առանձնահատկություն, որպես ձևական որոշակիություն:

Իրավունքի որոշակիությունը (ինստիտուցիոնալությունը) բնութագրվում է երկու կողմերով: Առաջինը կայանում է նրանում, որ, ի տարբերություն բարոյականության, իրավագիտակցության և հասարակական գիտակցման այլ ձևերի, իրավունքը դասվում է կառուցվածքի ինստիտուցիոնալ «հարկին»: Դրա համակարգը (ներքին կառուցվածքը) իրենից ներկայացնում է իրավական հաստատությունների, ինստիտուցիոնալ ձևավորումների համախումբ, որի շարքին դասվում են իրավունքի նորմը, իրավական ինստիտուտները, իրավունքի ոլորտները (և ենթաոլորտները):

Իրավունքի որոշակիության երկրորդ կողմը կայանում է նրանում, որ այն ձևավորող նորմերը հրատարակվում կամ սանկցիավորվում են պետության կողմից խիստ որոշակի ձևերով, օրինական համակարգերում, որոնցից են հանդիսանում տարբեր իրավաբանական աղբյուրները, և ամենից առաջ՝ օրենքները⁶:

Իրավունքի ձևի (աղբյուրի) տակ ընկալվում են հասարակության պետական կամքի արտահայտման որոշակի եղանակները (միջոցները): Ձևը ցույց է տալիս, թե ինչպիսիք են իրավունքի արտաքին արտահայտումները, ինչ ձևով է այն առկա և գործում իրական կյանքում: Ձևի միջոցով տեղի է ունենում պետական կամքին հասանելի և համընդհանուր բնույթի հաղորդում, այդ կամքի պաշտոնական իրականացում: Ձևի միջոցով իրավունքը կարծես ստանում է «կյանքի ուղեգիր», ձեռք բերում իրավաբանական ուժ:

Իրավունքի արտահայտման ձևերի ձևավորված տարատեսակությունների աղբյուրների (իրավունքի աղբյուրներ՝ իրավաբանական իմաստով) շարքին դասվում են իրավական ավանդույթը, դատական նախադեպը, նորմատիվային բովանդակությամբ պայմանագրերը, նորմատիվ ակտը:

Իրավունքի թվարկված նորմերը պետք է դիտարկվեն համապատասխան իրավական համակարգում իրավունքի այս կամ այն տեսակի գոյության և զարգացման կոնկրետ պայմանների հաշվարկով:

Ազգային իրավունքի արտահայտման հիմնա-

կան, առավել տարածված ձև հանդիսանում են նորմատիվային-իրավական ակտերը, որոնց շարքում առաջատար տեղը պատկանում է օրենքին:

ՀՀ Սահմանադրությանը համապատասխան օրենքը՝ Ազգային ժողովի կողմից ընդունված նորմատիվ ակտն է, որը հրապարակվում է խիստ որոշակի դեմոկրատական գործընթացի միջոցով՝ առավել կարևոր հասարակական հարաբերությունների կարգավորման համար, և տիրապետում է բարձրագույն իրավաբանական ուժով: Օրենքների և կանոնակարգային նորմատիվային ակտերին զուգահեռ ազգային իրավունքի արտահայտման ձևեր հանդիսանում են նորմատիվային բովանդակությամբ իրավական ավանդույթները, պայմանագրերը և իրավունքի այլ աղբյուրները: Այսպիսով, իրավական նորմը և օրենքը, ինչպես նաև իրավունքի ցանկացած այլ իրավաբանական աղբյուր, հարաբերակցվում են միմյանց հետ, որպես իրավունքի բովանդակություն և ձև:

Իրավունքի բովանդակության և ձևի առանձին դիտարկումը տրամաբանորեն թույլատրելի է միայն գիտական արստրակցման կարգով, հետազոտության հարմարավետության նպատակներով: Իրականում դրանք, ինչպես ճիշտ նկատում է Ա.Ֆ. Շեքանովը, «միմյանցից զատ գոյություն չունեն. իրավունքի անձև բովանդակությունը նույնքան անհմաստ է, ինչքան դրա՝ բովանդակությունից զուրկ ձևը: Իրավունքի բովանդակությունը առկա է միայն այնքանով, որքանով այն ձևակերպված է. միայն որոշակի ձևի հետ միասնությունում գոյություն ունի տվյալ իրավունքի կոնկրետ բովանդակությունը: Այդ իսկ պատճառով խորապես սխալ կլիներ կարծել, որ իրավունքի ձևը. «հանդիսանում է իրավական բովանդակության պարզագույն բաղանջ»: Իրականում իրավունքի ձևը իրավունքի բովանդակության «գոյության ձև» է, «դրա կազմակերպման, դրան որոշակիության, օբյեկտիվության տրման միջոց»⁷: Հատկապես իրավունքի բովանդակության և ձևի միասնությունից բխում է դրա նորմատիվային ընկալումը:

Իհարկե, չի կարելի հաշվի չառնել, որ ցանկացած իրավունք, որը դուրս է եկել այս կամ այն պետական գրասենյակից, կամ առավել ևս «դարձված օրենք», համարժեք արտահայտում է հասարակության պետական կամք: Ակնհայտ է, որ իրավունքի համար այդ պարտադիր պահանջին չեն համապատասխանում վարչական նորմատիվային ակտերում (օրինակ՝ կապի, հաղորդակցության ուղիների, քաղաքացիական օդագնացության, մաքսային ծառայությունների, առևտրի և այլ մարմինների) դժբախտաբար հաճախ հանդիպող այնպիսի նորմե-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րը, որոնցում թույլատրվում է քաղաքացիների ազատությունների և իրավունքների, նրանց արժանապատվության, նյութական, բարոյական-մշակույթային հետաքրքրությունների ոտնահարում, գերակայում են եսասիրական, նեղ վարչական շահերը:

Դրա հետ կապված՝ իրավունքի տեսությունում հասունացել է իրավունքին որպես հասարակության պետական կամքին ՀՀ Սահմանադրության հիման վրա օրենքներում, կանոնակարգային նորմատիվային ակտերում և այլ իրավաբանական աղբյուրներում պարունակվող առանձին նորմաների համապատասխանության հստակ գիտական չափորոշիչների մշակման անհրաժեշտությունը:

Ինչպես նշում է Վ.Մ. Բարանովը, իրավունքի նորմի արդարացիությունը արտահայտում է «մարդկային առաջընթաց գործունեության զարգացման տեսակը, մակարդակը կամ տարրը արտացոլելու իմացական-գնահատողական կերպարի տեսքով դրա բովանդակության և ձևի պիտանելիության աստիճանը», որը ստուգվում է գործնականով: Դրան ի հակադրություն՝ փիլիսոփայական և հատուկ-իրավաբանական իմաստներով կեղծ հանդիսանում է, ըստ նրա կարծիքի, իրավական նորմը. «օբյեկտիվորեն պարունակում է համազգային, համապետական շահերի կարգավորվող գործունեության առաջընթաց-դրական զարգացում»:

Իրավունքին համապատասխանող հանդիսանում են միայն արդարացի նորմերը: Ինչ վերաբերում է հասարակության պետական կամքին, բնական օրենքներին՝ որպես պոզիտիվ իրավունքի բարոյական հիմքերին (բարոյա-էթնիկ սկզբունք-

ների) չհամապատասխանող նորմերի, որոնք խախտում են քաղաքացիների ազատությունները և իրավունքները, և դրանով կամ որևէ այլ կերպ հակասում ՀՀ Սահմանադրությանը, ապա դրանք կեղծ նորմեր են, որոնք չպետք է կիրառվեն և օրենքով հաստատված կարգով պետք է ենթարկվեն փոփոխության կամ անվավեր համարվեն:

Անհրաժեշտ է նշել, որ հասարակության պետական կամքին առանձին նորմերի համապատասխանության գնահատման վերը առաջարկված չափորոշիչները վերաբերում են միաժամանակ ինչպես իրավունքի բովանդակությանը, այնպես էլ ձևին:

Շարադրվածից տեսանելի է, որ ազգային իրավունքի բովանդակության և ձևի հստակ տարբերությանը զուգահեռ իրավունքի օրենքի նորմերի նորմատիվային հատկանիշը ընդգծում է դրանց միասնությունը և մեկ կարգայնությունը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, օրինականությանը և իրավակարգի ամրապնդման, հասարակության և պետության առջև ծառայած խնդիրների լուծման իրավական ապահովվածությանը ուղղվածությունը:

¹ Վաղարշյան Արթուր, Պետության և իրավունքի տեսություն -2: Դասախոսություն: Երևան, 2011, էջ 19:

² Տե՛ս Дробышевский С.А. Политическая организация общества и право как явления социальной эволюции. М., 2015, с. 15-16.

³ Մանրամասն տե՛ս Ковалев А.А. Международная защита прав человека. М., 2013, с. 62-146.

⁴ Фарбер И.Е. О сущности права. Саратов. 1959. С. 45. Иодде О. С., Шаргородовский М.Д. Вопросы теории права. М., 1961, с. 53-54, 56 и др.

⁵ Տե՛ս Захарцев С.И. Некоторые проблемы теории и философии права. М., 2014, с. 45-46.

⁶ Տե՛ս Кудрявцев В. Н. Юридические нормы и фактическое поведение // Сов. государство и право. 1980. N 1. с. 15 и сл., Алексеева С. С. Право - институциональное социальное образование // Вопросы теории государства и права. Саратов.. 1983, с. 7 и сл.

⁷ Տե՛ս Шебанов А. Ф. Форма советского права. М., 1968, с. 24-25.

⁸ Տե՛ս Баранов В.М. Истинность норм советского права. Проблемы теории и практики. Саратов, 1989, с. 231,245.

Վարդան Տախկալյան
Ասպիրանտ ինստիտուտի փիլոսոֆիայի,
սոցիոլոգիայի և իրավունքի ՆԱՏ ԲԱ

РЕЗЮМЕ

Существенные признаки права

В данной статье автор обстоятельно проанализировал существенные характеристики права как основного элемента социально-нормативного регулятора, определил их содержательные особенности.

Ключевые слова: право, сущность права, признак права, нормативность, определенность, форма правления, общеобязательность.

Vardan Sakhkalyan
PhD Student of the Institute of Philosophy,
Sociology and Law NAS RA

SUMMARY

The Essential features of law

In this article the author has analyzed in detail the essential characteristics of rights, as a fundamental element of social and normative regulator, has defined their substantial features.

Keywords: law, the essence of the law, a sign of law, regulatory, certainty, form of government, the overall obligation.